Շրջաբերական Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ30 մայիսի ընդ համարաւ 211՝ յանուն Թեմական Առաջնորդաց Հայոց Ռուսաստանի, որով՝ վասն բարեկարգելոյ զԹեմական դպրանոցս ըստ ուսումնական մասին, պատուիրէ յետ հարցաքննութեանց՝ արձակեալ համարել ի պաշտօնէ զամենայն ուսուցիչս յիշեալ դպրանոցաց և յետ այնորիկ՝ յընտրութեան նորոց ուսուցչաց վարիլ ըստ հետևելումն—նախ ի պաշտօն ուսուցչի ընտրել զանձինս հմուտս ի գիտութեան, բարեբարոյս և ջերմեռանդս ի կրօնի, նուիրեալս միանգամայն գործոյ և եթ դաստիարակութեան մանկանց. երկրորդ՝ յուսուցչութիւն Թեմական դպրանոցաց հրաւիրել զանձինս, որք աւարտեալք են զընթացս ուսման ի բարձրագոյն ուսումնարանս և ի մասնագիտական բաժնի Հոգ. Ճեմարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի՝ և երրորդ՝ յետ ընտրութեան ուսուցչացն՝ զանուանական ցուցակ նոցին մատուցանել ի նկատողութիւն և ի վախճանական տնօրինութիւն նորին Սրբութեան՝ հանդերձ պարզաբանութեամբ ամենայն հանգամանացն և ցուցմամբ յականէ յանուանէ արժանեաց իւրաքանչիւրոցն ընտրելոց, թուոց դասուց և առարկայից և քանակութեան տարեկան թոշակաց նոցին:

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

21 մայիս. 1882 թուից սկսած՝ Քութայիսի արժանապատիւ Դաւիթ Աւագ քահանայ Եարալեանցը տարեկան նուիրում էր երեսուն (30) ռուբլի Մայր Աթոռիս Ճեմարանին: Այժմ մահամերձ հիւանդութիւնից ապաքինուելով՝ ինքնաբերաբար խոստանում է գրաւոր՝ իւրաքանչիւր տարի փոխանակ երեսունի՝ վաթսուն ռուբլի նուիրել ցմահ, իսկ իւր մահից յետոյ կտակել Մայր Աթոռիս մի գումար, որից տոկոս ստացուի մշտապէս վաթսուն ռուբլի տարեկան, ի նպաստ Ճեմարանի: Բացի այս դրամական նուէրից խոստանում է մահից յետոյ իւր հարուստ մատենադարանն էլ նուիրել Մայր Աթոռիս:

—

25 մայիս. Բագուայ Մարդասիրական ընկերութեան խորհրդի խնդրանաց համաձայն Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց քարոզիչ նշանակել Շամախու թեմին՝ Արժան. Կիւրեղ վարդապետ Սրապեանցին, որ արդէն ուղևորուեցաւ իւր նոր պաշտօնատեղին։

—

21 մայիս. Ագուլեցի Ա. կարգի վաճառական Մարգար Ցարութիւնեան Փանեանցի պսակը իւր տանամայր այրի Սոնայ Հախպատելեանցի հետ Ս. Սինօդը հրատարակում է անվաւեր, որովհետև Մարգար Փանեանցը տիկին Հախպատելեանցի որդու կնքահայրն է եղել։ Այս պսակը կատարուել է առանց Թոյլտուութեան Հոգևոր Իշխանութեան Քարուանսարայ գիւղում։ Իբրև մասնակից այս ապօրինութեան ենթարկւում են պատժի Թիֆլիսի Ներսէս քահանայ Աբովեանցը՝ խպառ արձակուելով Կոնսիստորիայի անդամակցութիւնից, Ղազախի գործակալ Ցակովբ քահանայ Գաբրիէլեանցը արձակւում է գործակալութիւնից. պսակադիր Մեսրովբ քահանայ Էդիլեանցը ենթարկւում է 150 ռուբլի տուգանքի յօգուտ ձեմարանի, Կոմիտաս քահանայ Սիմէօնեանցը 100 ռուբլի տուգանքի յօգուտ ձեմարանի. Ղուկաս քահանայ Սիմէօնեանցը դադարեցւում է քահանայագործութիւնից անորոշ ժամանակով։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ.

Երևանի Հայոց Թեմական դպրանոցի Հոգաբարձութիւնը համաձայն Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Կաթողիկոսի, 30-ն անցեալ մայիսի № 212 կոնդակի, հրաւիրում է դպրանոցում աւանդելի բոլոր առարկաների համար ուսուցիչներ, որոնք պէտք է աւարտած լինին բարձրագոյն ուսումնարաններում կամ Սուրբ Էջմիածնի ձեմարանի մասնագիտական բաժնում, իսկ եթէ այդպիսիները չգտնուին, դպրանոցի առարկաների դասաւանդութեան մէջ բազմամեայ փորձառութեամբ հարկաւոր հմտութիւնը ձեռք բերած ուսուցիչներ։ Դասերի վարձ նշանակուած է՝ բարձրագոյն դպրոցներում աւարտածներին դասական յիսուն ռուբլի, իսկ միւս-